

ՀՐԱԿԵՐ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏՆԵՐՈՒ

Վ. ԹԵՔԵԱՆԻ ՑՈՒՇԱՐՁԱՆԻՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



«ԹԵՔԵԱՆ ՖՈՆՏ» ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ որ, կարգ մը արգելիչ բանաւոր պատճառ-
Ներով, յետագել տափուած էր իր գործունէութիւնը, իր առաջին պարտականութիւն-
Ներէն մին կը նկատէ ձեռնարկել ողացեալ մեծ բանաստեղծին գերեզմանին վրայ յու-
շարձանի մը շինութիւն:

Առ այդ հրաւեր կ'ուղղէ բոլոր հայ արուեստագէտներուն՝ Եգիպտոս թէ այլուր,
որպէսզի ծրագիրներ պատրաստեն այդ նպատակին համար:

Նկատի պէտք է առնուին հետեւեալ պայմանները.

1. — Յուշարձանը պէտք է պատկերացնէ վ. ԹԵՔԵԱՆԸ որպէս բանաստեղծ և
հանրային մարդ, առարկայ համազգային մեծ արանքի:

2. — Մրցման կրնան մասնակցիլ բոլոր հայ արուեստագէտները. ճարտարապետ
կամ քանդակագործ :

3. — Յուշարձանը պիտի կառուցուի վ. ԹԵՔԵԱՆԻ գերեզմանին վրայ որ ունի
1×2 մետր մակերես, բարձրութիւնը պիտի ըլլայ առ առաւելն 2.5 մետր:

4. — Յուշարձանը իր ճարտարապետական կառուցուածքին մէջ կրնայ պարու-
նակիլ վ. ԹԵՔԵԱՆԻ գլուխիք, պոռնզէ հարթաքանդակներ (bas-relief). Կամ կրնայ
քաղկանալ կիսանդրիչ մը, եւայլն:

5. — Յուշարձանին համար լրիւ նիւթեղէնի ծախս նախատեսուած է մօտ 500
Եգիպտական Ասկի:

6. — Ներկայացուելիք ծրագիրները պիտի ըլլան գծագրութիւններ՝ գիմացէն,
քովերէն և ետեւէն տեսնուած պատկերներով, ինչպէս նաև եռ perspective ներկայացած
պատկեր մը: Կարելի է ի հարկին անոնց կցել բացատրողական գրութիւն մը:

7. — Գծագրութիւնները պէտք է յանձնուին ԹԵՔԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ Կեղրո-
ւատեղին առ առաւելն մինչեւ 31 Հոկտեմբեր 1947:

8. — «ԹԵՔԵԱՆ ՖՈՆՏ» ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ իրաւասութիւնը պիտի ունենայ մաս-
նագէտներու հետ խորհրդակցելէ վերջ, ներկայացուած ծրագիրներէն ընտրելու իր լա-
ւագոյն նկատածը, առանց պարտաւոր ըլլայու պատճառուարաննելու իր ընտրութիւնը:

9. — Ներկայացուած ծրագիրներէն առաջին երեքը պիտի ստանան մրցանակ:
Ա. մրցանակ՝ 100 հ. Ա.
Բ. մրցանակ՝ 50 հ. Ա.
Գ. մրցանակ՝ 25 հ. Ա.

Առաջին մրցանակ շահող ծրագիրը գործադրութեան պիտի գրուի:

«ԹԵՔԵԱՆ ՖՈՆՏ» ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

(Կույտ)

Գահիրէ, 4 Ապրիլ 1947

Հասցէ:

COMITÉ «FONDS TÈKÈIAN»

B. P. 864, Le Caire (Egypte)

1947-ի "ՍԻՈՆ,, ԿԸ ՆՈՒԻՐԵ

Հայֆային
Տիկին Զատկի Գ. Կիւլիւզեան՝ Ցիար Կարապետ Սուբիսսեանին (Հալէա):

ԱՍԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՅԹԵԱԹՆԵՐ ԵՒ ՊԱՏՄՈՒԱԺԲՆԵՐ, Հայացուց՝ Մազսութ Մազսութեան, տպ. Ա-
Յակոբեանց, Երուսաղէմ, 1947, էջ 64.

ԳԻՒԼԻԶԱՐ, Նշարներ Մշու, Գեղամէն, գրեց՝ Արմենունի Տէր Կարապետեան (Դե-
ւոնեան), տպ. Փարիզ, 1946, էջ 205.

ԱՍԱՌԻՆՑԻ ԴԱԻԻԹ, շաբահիւսեց՝ Կ. Սառւնի, տպ. Հայ Ճեմարանի, Պէյրութ, 1947, էջ 342.

I ASK YOU LADIES AND GENTLEMEN, by Leon Surmelian, printed in Cooperation with E. P. Patton & Co. New York, pages 318.

ՄՕՏ ՕՐԵՆ ԼՈՅԾԱ ԿԸ ՏԵՍՆԵ

ԵՐԻՇԵ ԱՐՔԵՊՈ. ԴՈՒՐԵԱՆԻ

**Ը Ն Թ Ա Ց Ք
Ի Գ Ր Ա Յ Բ Ա Ր Բ Ա Ռ**

Ա Թ Գ Զ Ի Ն Տ Ա Ր Ի

Բ. Հ Ա Վ Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Դ 1947

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Ե

Ժ Ա Մ Ա Գ Ի Ր Ք

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՓՈՔՐ - ԳՐՊԱՆԻ

Զ. Պ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Դ 1947

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology
Printed in

JERUSALEM — PALESTINE